EU4Business

Ամփոփաթերթ քաղաքացիների համար

Հայաստան

2023

www.eu4business.am

Ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

EU4Business

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՃԻՆ

Եվրոպական միության «EU4Business»՝ «ԵՄ-ն՝ բիզնեսի համար» նախաձեռնությունը հովանավորության նախաձեռնություն է և ներառում է Եվրամիության բոլոր գործողությունները, որոնք ուղղված են Արևելյան գործընկերության երկրների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի ՓՄՁ-ների աջակցությանը:

Հայաստանում պորտֆելը 2023 թվականին

169.2
միլիոն եվրո
ՓՄՁ-ներին ԵՄ աջակցության ընդհանուր բյուջեն

37
ծրագիր
աջակցություն է տրամադրել ՓՄՁ-ներին

Բացվածքը՝ ըստ միջամտության տեսակների



Հայաստանում 2023 թվականին գրանցված արդյունքները

6,116
ՓՄՁ աջակցություն է ստացել

39.4%
կին մենեջեր/սեփականատեր ունեցող ձեռնարկություններ են

237.5
միլիոն
եվրո լրացուցիչ եկամուտ ԵՄ աջակցություն ստացած ՓՄՁ-ների կողմից

28.3%
աճ է գրանցվել ԵՄ աջակցություն ստացած ՓՄՁ-ների շրջանառությունում

18,294
նոր աշխատատեղեր են ստեղծվել

22.7%
աճել է աշխատողների թիվը ԵՄ աջակցություն ստացած ՓՄՁ-ներում

193
ԵՄ աջակցություն ստացած ՓՄՁ-ները ներգրավվել են արտահանման մեջ

6.8%
արտահանման աճ ԵՄ աջակցություն ստացած ՓՄՁ-ներում

2023թվականին Հայաստանում արդյունքներն ըստ ուղղությունների

Ֆինանսավորման հասանելիություն (ՖՀ)

3,571
ՓՄՁ ստացել է վարկ

32.7%
տրամադրվել է կին մենեջեր/ սեփականատեր ունեցող ՓՄՁ-ներին

€308.2
միլիոն
նախաձեռնված վարկերի ընդհանուր արժեքը

€83,994
միջին վարկը

9 «ԵՄ-ն բիզնեսի համար»-ի հետ աշխատող գործընկեր ֆինանսական հաստատություն

- Կոնցեսիոն վարկեր ազգային բանկերի միջոցով
- Միկրոֆինանսավորում տնայնագործ բիզնեսների համար
- Փոքր վարկեր ՓՄՁ-ներին
- Ազգային բանկերի աշխատակիցների վերապատրաստում՝ ուղղված ՓՄՁ-ների սպասարկման բարելավմանը
- Ֆինանսական գրագիտության դասընթաց ՓՄՁ-ների համար

Բիզնեսի զարգացման ծառայություններ (ԲԶԾ)

519
խորհրդատվական ծառայություններ են մատուցվել ՓՄՁ-ներին

151
գործարարության աջակցության կազմակերպությունների կարողություններ հզորացվել են

50.3%
կին մենեջեր/ սեփականատեր ունեցող ՓՄՁ-ներ

186
ՓՄՁ մասնակցել է «Բիզնեսը բիզնեսի համար» միջոցառումների

- Անմիջական խորհրդատվություն և դասընթացներ ՓՄՁ-ների համար
- Գործարարության աջակցության ազգային կազմակերպությունների (ԳԱԿ) վերապատրաստում և կարողությունների զարգացում
- Բիզնես ինկուբատորների հիմնում՝ ստարտափերի համար
- Փոխադարձ աջակցության և զարգացման բիզնես կլաստերների զարգացում
- Աջակցություն կառավարությանը՝ նոր շուկաների հատկորոշման գործում
- Կարողությունների զարգացում արտահանման աջակցման կազմակերպություններում

Բիզնեսի համար նպաստավոր միջավայր (ԲՆՄ)

60
օրենք, քաղաքականություն, կանոնակարգ և ընթացակարգ է բարեփոխվել

195
կառավարական հաստատությունների կարողությունները հզորացվել են

10
հանրային և մասնավոր հատվածների երկխոսության տարածաշրջանային միջոցառում

52
հանրային և մասնավոր հատվածների երկխոսության միջոցառում երկրում

- Կարգավորման շրջանակի բարեփոխման և լավագույն փորձի հանրահռչակում
- Քաղաքականություն մշակողների և կարգավորողների կարողությունների հզորացում
- Հանրային և մասնավոր հատվածների երկխոսության խրախուսում
- Գործարար շրջանակների իրազեկում՝ բարեփոխումների գործընթացների և կանոնների/ ընթացակարգերի մասին

Հաջողության պատմություններ

Հայաստանի բնական գեղեցկության նկատմամբ ձեռներեցի սերը ԵՄ աջակցությամբ վերածվում է ծաղկուն բիզնեսի

Արտուշ Եղիազարյանը «ԵՄ-ն՝ բիզնեսի համար» ծրագրի աջակցությամբ Աշոցքի մարզի Վարդաղբյուր գյուղում բացեց «Herbs & Honey» բուտիկ-հյուրանոցը: 32000 եվրո դրամաշնորհով նա վերանորոգել է կիսաքանդ տունը, հիմնել մինչև 30 հյուր ընդունելու կարողությամբ 600 քմ մակերեսով երկհարկանի հյուրանոց՝ մինչև 40 այցելուի սպասարկող ռեստորանային տարածքով: Հյուրանոցը գործում է 2024 թվականի հունվարից:

Կարդացե՛ք ավելին:

«Վստահիր ինքդ քեզ և միշտ առաջ գնա». երիտասարդ ձեռներեց Մերիի խորհուրդը կանանց և աղջիկներին

Երիտասարդ հայ ձեռներեց, Sevan IT Plus ստարտափի հիմնադիր Մերի Վարդանյանը վեց ամիս անցկացրեց Իսպանիայում՝ ԵՄ կողմից ֆինանսավորվող Էրազմուս երիտասարդ ձեռներեցների փոխանակման ծրագրի շրջանակներում: Փոխանակումը Մերիի համար անձնական և մասնագիտական զարգացման բացառիկ ռեսուրս դարձավ: Նա ոչ միայն զարգացավ որպես բիզնեսի սեփականատեր՝ սովորելով հետազոտել շուկան, նախագծել և իրականացնել հաջող մարքեթինգային ռազմավարություն և աշխատել հաճախորդների հետ, այլև կայացավ որպես ծրագրավորող՝ պատասխանատվություն ստանձնելով հյուրընկալ ընկերությունում ծրագրային ապահովման մշակման ողջ գործընթացի համար:

Կարդացե՛ք ավելին:

Կարդացե՛ք ավելին:

Շոկոլադի քաղցր բույրը

Էմիլ Հարությունյանը 2004թ.-ից եվրոպական ոճի շոկոլադ արտադրող «Arcolad» ընկերության հիմնադիրն է: Արտադրությունն ընդլայնելու նպատակով ընկերությունը մի քանի վարկ էր վերցրել: «ԵՄ-ն բիզնեսի համար» նախաձեռնության աջակցությամբ նրանք հաղթահարեցին ֆինանսական դժվարությունները: Այժմ ընկերությունը շոկոլադ է արտահանում ԱՄՆ և Եվրոպա, վերջերս էլ բացեց ԱՄՆ-ում բաշխման դուստր ձեռնարկություն, որն իր գործունեությունը մեկնարկեց 2024թ.-ին:

Կարդացե՛ք ավելին:

«Կանաչ ագրոբիզնեսում կարևորը մարդկանց մտածելակերպի փոփոխությունն է». Լենա Սարգսյանը խոսում է իր ձեռնարկության մասին

Ստեփանավանում բնակվող երիտասարդ ամուսիններ Դավիթ Դավթյանը և Լենա Սարգսյանը մշակում և իրագործում են ապագային միտված բիզնես ծրագրեր, որոնք կնպաստեն ոչ միայն իրենց, այլև համայնքի բարգավաճմանը: Ամուսինների հեռահար պլանների մի մասը կյանքի է կոչվում Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության համաֆինանսավորմամբ իրականացվող «Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն» (EU-GAIA) ծրագրի աջակցությամբ:

Մանրամասների համար տե՛ս՝
www.eu4business.am